



«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«9» հուլիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 Լ. Թունյան

ԳԲԽ-23/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02257413) 22.06.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 22.06.2015թ. ներկայացրած բողոքով «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՖՄՀԴ-ՊԸԾԶԲ-15/1» ծածկագրով պարզեցված

ընթացակարգով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն:

Հետագայում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցման արդյունքում, առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել է, ընտրված մասնակից հայտարարելով 2-րդ տեղը զբաղեցրած «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին:

Մասնավորապես, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել ՀՀ ՖՆ ՏՏԵՆԶ վարչության աշխատակից Ա. Պապոյանի կողմից 16.06.2015թ. տրված եզրակացությունը, որտեղ նշվել է, որ Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է՝ 3749384 ՀՀ դրամ:

Ընկերությունը տեղեկացրել է, որ նշված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը:

2014թ. ապրիլի 25-ին «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի տնօրեն է նշանակվել Ա. Վարդանյանը: ՀՀ օրենսդրության համաձայն Ընկերության տնօրենի կողմից պետք է կազմվեն և ներկայացվեն հարկային հաշվետվությունները, ինչի հիմքն են հանդիսանում Ընկերության գործունեության ընթացքում կազմված փաստաթղթերը:

Տվյալ փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում Ընկերության տնօրեն Ա. Վարդանյանը հայտնաբերել է, որ մինչև Ընկերության տնօրեն նշանակվելը, «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից 01.10.2013թ.-16.04.2014թ. ընթացքում շուրջ 30000000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ գումար է փոխանցվել տարբեր կազմակերպությունների, սակայն սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերում բացակայել են փոխանցման հիմքերը:

Բողոքաբերը նշել է, որ փաստի առթիվ 2014թ. ամռանը «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Վարդանյանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությունում ստուգում անցկացնելու խնդրանքով, քանի որ նման իրավիճակը կարող է պատճառ հանդիսանալ լրացուցիչ հարկային պարտավորության: ՀՀ ֆինանսների նախարարի 24.12.2014թ. թիվ 5011273 հանձնարարագրի համաձայն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ում նշանակվել է բյուջեի հետ փախհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Հաշվի առնելով, որ ստուգումն անընդհատ ձգձգվում էր և չէր ընթանում պատշաճ խորությամբ, Ընկերության կողմից 04.02.2015թ. ՀՀ գլխավոր դատախազին է ներկայացվել հաղորդում հանցագործության մասին, կցելով ներկայացված փաստերը հիմնավորող փաստաթղթեր: Հետագա ընթացքը լուծելու համար, նշված հաղորդումը 11.02.2015թ. ուղարկվել է ՀՀ ՖՆ քննչական վարչություն, որտեղ Ընկերության կողմից տրվել է բացատրություն: Ընկերությունը նշել է նաև, որ նշված ստուգումն իրականացվում էր քննչական վարչության կողմից տրամադրված նյութերի հիման վրա: Չստանալով նշված վարչությունից նյութերի նախապատրաստման արդյունքում կայացված որոշումը և ղեկավարվելով «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, Ընկերությունը 25.05.2015թ. կրկին դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն, որպեսզի տեղեկանա գործի ընթացքի մասին և 09.06.2015թ. ՀՀ ՖՆ քննչական վարչության քննիչ Ն.Ս. Եղիկյանի կողմից ստացել է թիվ 4943/122 գրությունը և դրան կից՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը: Քննիչն իր որոշումը հիմնավորել է նրանով, որ 2014թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 5011273 հանձնարարագրի համաձայն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ում նշանակվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմինների կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքները դեռևս չեն ստացվել: Այսինքն, քանի որ դեռ չկան ստուգման արդյունքները, քննիչը որոշել է քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Միաժամանակ, Ընկերությունը տեղեկացրել է, որ 15.06.2015թ. օրենքով սահմանված ժամկետում, «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն արդեն իսկ ՀՀ գլխավոր դատախազին ներկայացրել է ՀՀ ՖՆ քննչական վարչության քննիչ Ն.Ս. Եղիկյանի 23.02.2015թ. նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին կայացած որոշման դեմ բողոք:

Ընկերությունը նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն պահպանելով օրենքով գործող սահմանված կարգը և ժամկետները, կատարել է իրեն վերապահված անհրաժեշտ գործողություններ իր իրավունքները պաշտպանելու ուղղությամբ, ինչպես նաև այն, որ այս պահին դեռևս չկան համապատասխան պետական

մարմինների կողմից օրենքով ուժի մեջ մտած որոշումներ և/կամ այլ պահանջներ՝ խնդրել է չեղյալ հայտարարել «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժելու, ինչպես նաև «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 25.06.2015թ. N 47/15 գրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» համաձայն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հունիսի 17-ին կայացած նիստի որոշմամբ մերժվել է առաջին տեղն զբաղեցրած «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և ընտրված մասնակից է ճանաչվել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ն:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից 2015թ. հունիսի 22-ին ներկայացված բողոքը չի կարող ուղղված լինել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. հունիսի 17-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության դեմ, քանի որ նշված հանձնաժողովի որոշումը կայացվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության, «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի հավելված N 2 հայտարարության և ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

ԳԲԽ-23/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-23/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն, «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ն և Գրողների «Ծաղկաձորի Ստեղծագործական տուն» ՓԲԸ-ն:

2. Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (10.06.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.06.2015թ. տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 8.1 կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ին, երկրորդ տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ Նախարարություն):

4. Պատվիրատուն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 12.06.2015թ. կատարած հարցմամբ Նախարարությանը խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից 2015թ. հունիսի 10-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

5. Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.06.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 10-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3749384 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության՝

- 1.1.1 կետով որոշում է կայացրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված N 2 հայտարարությունը (պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին) որակել իրականությանը չհամապատասխանող և «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:

- 2.1 կետով որոշում է կարացրել ընտրված մասնակից հայտարարել «Հոթել Ադվերան» ՓԲԸ-ին:

7. Կենտրոնը 24.06.2015թ. N 01/04.1/1391-15 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով սեղմ ժամկետում հայտնել 10.06.2015թ. դրությամբ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունեցել է, թե ոչ, սակայն Նախարարությունից պատասխան չի ստացվել:

4. ԳԲԽ-23/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի 22.06.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 25.06.2015թ. N 47/15 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք,

որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝ հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ի պատասխան Պատվիրատուի 12.06.2015թ. հարցմանը՝ ՀՀ ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչության կողմից 16.06.2015թ. տրամադրվել է եզրակացություն, որի համաձայն «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, որի գումարը կազմել է 3749384 ՀՀ դրամ:

Այսպիսով՝ «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ն 2015թ. հունիսի 10-ի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 3749384 ՀՀ դրամի չափով, իսկ Ընկերության կողմից 2015թ. հունիսի 10-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ որևէ հիմնավոր ապացույց չի ներկայացվել, ուստի տվյալ պարագայում գտնում ենք, որ Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք մերժել «ԵՊՀ-ին առընթեր Արտաշես Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հյուրատան և տրանսպորտային ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՖՄՀԴ-ՊԸԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2015թ. տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1.1.1 կետով «Պրոքսի Սենտր» ՍՊԸ-ի հայտը մերժելու և 2.1 կետով «Հոթել Ադվերան» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չեղյալ հայտարարելու պահանջների վերաբերյալ Ընկերության 22.06.2015թ. Կենտրոնին ներկայացրած բողոքը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝

 Լ. Այունց

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար՝

 Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-23/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝

 Ա. Գրիգորյան